բոտումն է, իսկ Ս. Տրդատի որդին Խոսրով Բ. Կոտակ ամփոփուեցաւ Անի կամ Կամախ ամրոցում։ * Մ. Խորենացին նոյնպէս յիշում է, որ Ս. Գրիգորի մարմինն ամփոփուած է Թորդանում. բայց նա պատմում է, թէ Մանեայ այրում հովիւների ձեռքով թաղուելուց յետոյ, երբ քրիստոնէական հաւատն արդէն հաստատութիւն գտած էր Հայաստանում, դարձեալ վերին ցուցմամբ Գառնիկ անունով մի ճգնաւոր գտաւ ս. մարմինը և բերեց դրեց Թորդան գիւղում։ Այդ ճգնաւորի անունն և պատմութիւնը Փաւստոսին յայտնի չէ. իսկ միւս պատմիչներն յիշում են, Խորենացուց առնելով, թէ այսպիսի մի անձն եղել է, այդ երևում է նորանից, որ Սեպուհի վանքերից մէկը կոչւում էր Գառնկայ վանք, այլ կերպ Կառնոյ վանք. ** այժմ Աւագ վանքից ոչ հեռու Կառնի անունով գիւղն է նորա տեղը։ Շատ հաւանական է, որ այդ ճգնաւորը Ս. Լուսաւորչի աշակերտներից մէկն էր որ ճգնում էր նոյն Սեպուհ սարի վերայ. նա առաջինն իմանալով իւր վարդապետի մահն, եկաւ փոխադրեց նորան Թորդան աւանը, որ նորա կալուածքն էր, և այնտեղ, ինչպէս աւանդութիւնն ասում է, ամփոփեց ս. նշխարները նորա հիմնած եկեղեցու մօտ, նորա իսկ դրօսա-

---

* Փաւստ. բիւզ. Գ. 2. 11, 12, 14 եւ Ե. 24, 25,

** Ասողիկ. Բ. 5։